



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

”11” հոկտեմբեր 2013 թ.

թիվ 56-Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ 2013 ԹՎԱԿԱՆԻՆ ԱՆՑԿԱՑՎԵԼԻՔ
ՓՈՐՁՆԱԿԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՄԱՏԱՐԱԾ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ
ՀՐԱՀԱՆԳՉԱԿԱՆ ՏԵՂԱՄԱՍԻ ՁԵՎ ԹԻՎ 7 ԱՄՓՈՓ ՏԵՂԵԿԱԳԻՐԸ
ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Գյուղատնտեսական համատարած հաշվառման» մասին Հայաստանի Հանրապետության օրենքի 4-րդ հոդվածի 5-րդ մասով՝ Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհուրդը որոշում է.

Հաստատել՝

«ՀՀ 2013թ. փորձնական գյուղատնտեսական հաշվառման ընթացքում հրահանգչական տեղամասի ամփոփ տեղեկագիրը»՝ համաձայն հավելվածի:

Ցուցումներ հրահանգչական տեղամասի ամփոփ տեղեկագրի լրացման վերաբերյալ

1. Հրահանգչական տեղամասի ամփոփ տեղեկագիրը (**Ձև թիվ 7**) լրացվում է հրահանգիչ-հսկիչի կողմից՝ իր տեղամասի հաշվարարներից փորձնական գյուղատնտեսական համատարած հաշվառման նյութերն ընդունելուց հետո:

Ամփոփ տեղեկագրի առաջին էջի (դիմային էջի) աջ անկյունում գրվում է հաշվառման տեղամասի համարը, որի կազմում ներառված է հրահանգչական տեղամասը և հրահանգչական տեղամասում ներառված հաշվային տեղամասերի քանակը, իսկ հասցեամասում գրվում է հրահանգչական տեղամասի համարը:

Եթե հրահանգչական տեղամասի կազմի մեջ ներառված են և՛ քաղաքներ, և՛ գյուղեր, ապա լրացվում են երկու տարբեր ամփոփ տեղեկագրեր:

2. Քաղաքների համար Ձև թիվ 7-ը լրացնելիս պետք է հաշվի առնել.

- եթե հրահանգչական տեղամասի կազմում ներառված են քաղաքային համայնքնին ենթակա գյուղական բնակավայրեր, ապա դրանց տվյալների հանրագումարները պետք է լրացվեն գյուղական վայրի ամփոփ տեղեկագրում:

3. Գյուղերի համար Ձև թիվ 7-ը լրացնելիս պետք է հաշվի առնել.

- եթե որևէ համայնք/բնակավայր բաժանված է երկու և ավելի հաշվային տեղամասերի, ապա Ձև թիվ 7-ում առանձին տողով գրառվում են յուրաքանչյուր հաշվային տեղամասի տվյալների հանրագումարները, այնուհետև հաշվարկվում համայնքի/բնակավայրի տվյալների հանրագումարն ամբողջությամբ:
- Եթե հրահանգչական տեղամասի կազմի մեջ ներառված են երկու և ավելի գյուղական համայնքներ, ապա սկզբում գրառվում են տեղեկություններ մեկ գյուղական համայնքի բոլոր հաշվային տեղամասերի վերաբերյալ, հաշվարկվում ամբողջությամբ գյուղական համայնքի տվյալների հանրագումարը, այնուհետև գրառվում են տեղեկություններ մյուս գյուղական համայնքի հաշվային տեղամասերի վերաբերյալ տվյալները և այդպես շարունակ:

4. 1-ին և 2-րդ բաժիններում հաշվային տեղամասերի տվյալները լրացվում են ըստ դրանց հաջորդականության:

5. Ձև թիվ 7-ի 1-ին բաժնի «Հաշվառված է հաշվարարի կողմից» 1-17 սյունակները յուրաքանչյուր հաշվային տեղամասի համար լրացվում են Ձև թիվ 6-ի (հաշվային տեղամասի ամփոփ տեղեկագիր) համապատասխան հանրագումարային տվյալներից, իսկ 2-րդ բաժնի՝ «Հանրագումարը՝ հաշվի առնելով վերահսկիչ շրջայցը» տվյալները լրացվում են հաշվարարի ամփոփ տեղեկագրի «Ընդամենը հաշվի առնելով վերահսկիչ շրջայցը-ընդամենը ըստ հաշվային տեղամասի» տողի տվյալներից:

6. Ձև թիվ 7-ի «Վերահսկիչ շրջայցի արդյունքների ամփոփագիր» բաժինը հրահանգիչ-հսկիչը լրացնում է իր տեղամասի հաշվային տեղամասերի ամփոփ տեղեկագրերի (Ձև թիվ 6) «Վերահսկիչ շրջայցի արդյունքները» բաժնի համապատասխան տվյալների հանրագումարից:

7. Կազմված հարցաթերթերի, հարցաթերթերի հավելվածների և ուղեկցող թերթերի քանակի մասին տվյալները լրացվում են Ձև թիվ 6-ի համապատասխան տվյալներն ամփոփելով:

8. Գրառելով բոլոր հաշվային տեղամասերի տվյալները՝ հրահանգիչ-հսկիչը հաշվարկում է հանրագումարներն ամբողջությամբ ըստ հրահանգչական տեղամասի (ըստ 1-ին և 2-րդ բաժինների):

9. Համոզվելով, որ փաստաթուղթը ճիշտ է կազմված՝ հրահանգիչ-հսկիչը գրում է ամսաթիվը և ստորագրում:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ Հայաստանի Հանրապետության 2013 թվականի փորձնական գյուղատնտեսական համատարած հաշվառում

Հավելված Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի 2013 թվականի հոկտեմբերի 11-ի թիվ 56-Ա որոշման

քաղաքային

Ձև թիվ 7-----*(որը պետք չէ ջնջել)*

գյուղական

Հաշվառման տեղամասի համարը	Հրահանգչական տեղամասում ներառված հաշվային տեղամասերի քանակը

Ա Մ Փ Ո Փ Տ Ե Ղ Ե Կ Ա Գ Ի Ր

ՀՐԱՀԱՆԳՉԱԿԱՆ ՏԵՂԱՄԱՍԻ N-----

Մարզ-----Տարածաշրջան-----

Քաղաք-----Գյուղական համայնք-----

ՎԵՐԱՀՄԿԻՉ ՇՐՋԱՅՑԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԱՄՓՈՓԱԳԻՐ

Փորձնական գյուղատնտեսական հաշվառման ժամանակ հաշվարարի կողմից սխալ գրառումներ են կատարվել տնտեսության գյուղատնտեսական նշանակության հողերի և/կամ գյուղատնտեսական կենդանիների վերաբերյալ տեղեկատվության լրացման ժամանակ										
Գյուղատնտեսական նշանակության հողեր, <i>հսս</i>					Գյուղատնտեսական կենդանիներ, <i>գլուխ / հաս</i>					
Վարելա-հող	Պտղատու այգի և հատապտղանոց	Խաղողի այգի	Խոտհարք	Արոտավայր	Խոշոր եղջերավոր անասուններ, ընդամենը	որից՝ կովեր	Խոզեր, ընդամենը	Ոչխարներ, ընդամենը	Այծեր, ընդամենը	Թռչուններ, ընդամենը
<i>1.</i>	<i>2.</i>	<i>3.</i>	<i>4.</i>	<i>5.</i>	<i>6.</i>	<i>7.</i>	<i>8.</i>	<i>9.</i>	<i>10</i>	<i>11.</i>

Ընդամենը կազմվել է Ուղեկցող թերթ (Ձև թիվ 10)-----

Ծանոթություն-----

ՀԱՆՐԱԳՈՒՄԱՐՆԵՐԸ՝ ԸՍՏ ՀԱՇՎԱՅԻՆ ՏԵՂԱՄԱՍԻ

Հաշվային տեղամասի համարը	Հաշվարարի ազգանունը, անվան և հայրանվան սկզբնատառերը	Հրահանգչական տեղամասում ներառված գյուղական համայնքների և բնակավայրերի անվանումը	Ամփոփ տեղեկագրի էջերի քանակը (Ձև թիվ 6)	Լրացված հաշվառման հարցաթերթի քանակը	Լրացված հարցաթերթերի հավելվածների քանակը	ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ (տվյալ համայնքում / բնակավայրում)										
						Գյուղատնտեսական նշանակության հողեր, <i>հա</i>					Գյուղատնտեսական կենդանիներ, <i>գլուխ / հաս</i>					
						Վարելահող	Պտղատու այգի և հատապտղանոց	Խաղողի այգի	Խոտհարք	Արոտավայր	Խոշոր եղջերավոր անասուններ, ընդամենը	որից՝ կովեր	Խոզեր, ընդամենը	Ոչխարներ, ընդամենը	Այծեր, ընդամենը	Թռչուններ, ընդամենը
1.	2.	3.	4.	5.	6.	7.	8.	9.	10.	11.	12.	13.	14.	15.	16.	17.

1. ՀԱՇՎԱՌՎԱԾ Է ՀԱՇՎԱՐԱՐԻ ԿՈՂՄԻՑ

Ընդամենը՝ հաշվառված է հաշվարարի կողմից																

2. ՀԱՆՐԱԳՈՒՄԱՐԸ՝ ՀԱՇՎԻ ԱՌՆԵԼՈՎ ՎԵՐԱՀՄԿԻՉ ՇՐՋԱՅՑԸ

Ընդամենը՝ հաշվի առնելով վերահսկիչ շրջայցը																